

ՅՈԳԵՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐԱ ՄԵԱՑՈՐԴՆԵՐԸ ՄԵԶԱՆՈՒՄ

Ա. Տէր-Պօղոսեանի 1

Կրօնները շարունակ այնպէս չեն եղել, ինչպէս նոքա զոյտթիւն ունին: Պարմութիւնից իմանում ենք, որ նոքա մի սարմանացին դրութիւնից աճել և զարգացել են զանազան փոփոխութիւններով, և թէ բոլոր նախնական կրօնները և զարգացած կրօնները իրենց նախնական վիճակում ընդհանրական յենակէցներ, ըուլորին յապուկ ընդհանուր զաղափարներ ունին, որոնք անբարակոյս սկզբնականը ունիք է համարւին և որոնց վերարարադրումը կրօնի փիլիսոփայութեան ամենառաջին խնդիրներից մէկն է:

Բնապաշտութեան (Naturismus) ենթադրութիւնը պաշտպանողները ընդունում են որ մարդս, գեսնելով բնութեան հրաշալիքը, նորա գուած օգուզն ու վնասը, նորա՝ նախամարդու համար անըմբընելի ոյժն ու զօրութիւնը, իւր բանականութեան համար անքացազելի երեսոյթներին և այդ երեսոյթներն իրենց մէջ կրող

¹ Ակս Էօդւածը՝ պարշաճ փոփոխութիւններով, կարդացել է Բերլինի Հայուսանուղական ժողովում 1898-99 ձմերնագին սեմեադրի ընթացքում: Տպագրութեան համար պատրաստելուց վերոց ձեռքու անցաւ այս նիւթի համար խիստ հետաքրքիր մի աշխատասիրութիւն—Dr. M. Abeghian: Der armenische Volksglaube (=Նր. Արելեան—Հայոց ժողովրդական հաւատքը, Leipzig, 1899), որի վրա անհրաժեշտ ուշադրութիւնը դարձրինք: Ծան. Հեղինակի:

Ներկալ աշխարութիւնը մի քանի ամիս առաջ լրկւած էր խմբագրութեանս, և, Էօդւածագրի ցանկութեամբ, եր դարձւեց իրեն՝ պ. Աբեղեանի նոր լոկ տեսած աշխատասիրութիւնը ի Նկարի առնելու համար: ԽՄԲ: :

առարկաներին վերագրում է զերմարդկային, ասպեածալին բնաւորութիւն, որոնց առաջ խոնարհւելու է սփիպըում ինքը, և այդ բարբերութիւնից ծագում է պաշտամունքը—կրօնի հիմքը:

Բայց կրօնական պաշտամունքը կարող չէր ծնռւնդ առնել սարսափից, վախից: Նախամարդը վախենում է, որովհետեւ նորա մրածողութեան եղանակն է անթրօպոպաթիան (=Anthropopathie), այսինքն՝ նա վերագրում է բոլոր արդաքին իրերին և երեսութներին մարդկացին աֆֆլիկոններ՝ մոլութիւն, կիրք, ցանկութիւն, կամքեն: Սա երեւան է գալիս Դիցաբանական պարմածքներում, ուր ոչ միայն ասուածներին և վերագրուում մարդկային բնութեան լափուկ բարկութիւն, սխակալութիւն, վրէժխնդրութիւն, ևն, այլ և անշունչ իրերին, հետեւ բար ընդունակ՝ մարդուն որ և է չարիք կամ վնաս հասցնելու Այն ամեն գործօնութիւնը, որը մեր ներքին աշխարհը լցնում է, այսինքն մեր մրածման բազմազան ընթացքը, զգացումների զարգնածածուկ խալը, Դէպի որ և է մի բան ձգտելու մեր կենդանի ոչժը՝ որի անսահման ազարութեան մշն է թւռում մեր ամենամեծ բարիքը—անհարի երեխայութիւնը և գիրակցութեան պատճեննեկութիւնը արդաքին աշխարհի ամենապարբեր ձեւերի մէջ կլ գենենել է կարծում¹: Եւ մեզ ամենքիս մեր երեխայութեանը և զուցէ շաբերին իրենց հասուն բարիքումն էլ այս զգացմունքը փոքր Դեր չէ խաղում. միայնակ խիստ անդառով անցնելիս՝ քամու սուլոցը, պերեների սօսափիւնը, սահող առւազի մեղմ զլզլոցը, որ և է կենդանու խոռու մոնչիւնը, զոռը, կամ մթութեան մէջ խարիսխելիս՝ անօգնական Դրութիւնը, անսպասելի պատահարի կարելիութիւնը մեզ ազդում են մի սարւուռ. մենք զգում ենք վախ ոչ որովհետեւ իրերը անմիջական կերպով կարող էին մեզ վնասել, —նոցա անվնաս լինելը մենք փորձառութեամբ զիտինք—ոչ, այլ որովհետեւ նոցա վերագրում ենք մի գործող ևս—հոգի Ուրեմն բնապաշտութեան ենթայրւթիւնը պաշտպանողները, որոնք հաւաքացնում են՝ մթէ կրօնական պաշտամունքի ամենահին ձեւը անմիջական կերպով

¹ Lotze—Mikrokosmus 4. Aufl. 1885—88, Leipg. (=Loyk—Միկրոկոսմոս, 3-րդ ուղ.) I, էջ 4.:

ուղղում է դեպի բնութեան ոյժերը ¹, անգես են անում՝ այդ ոյժերի մէջ բնակող և դոցա շարժող ու կենդանութիւն քւող մի ինչ որ, մի էակ։ Հէնց այն հանգամանքը, որ իրերը և երկոյթ ները մտածում են իրեւ մարդանման, իրեւ հոգեւորւած էակներ, լուսաբանում է հոգու խաղացած գլխաւոր դերը մասնաւորապէս կրօնական հայեացքների ծագման և զարգացման մէջ։ և ամենաին չափազանցրած չի լինի ասել, թէ քողոր կրօնական մրապատկերները ամենասերու կերպով կապւած են «հոգի» մրապատկերի հետ։... Ուրեմն ուր որ մի մարդկացին համայնքի մօտ արդէն կրօնը գոյութիւն ունի, զրեթէ մաթեմատիկական ճշգութեամբ կարելի է խսպահ լինել, որ այնպեղ հոգելէնի մասին նոյնպէս որ և է մրապատկեր գոյութիւն ունի արդէն ²։

Տարակոյս չըկայ որ բոլոր մրապատկերները, որոնք մեր գիտակցութեան պարունակութիւնն են կազմում, ձեռք են բերւած ժամանակի ընթացքում և որ այս մրապատկերները փոփոխութեան և զարգացման ենթակայ են։ Նշանակում է որ եղել է մի ժամանակի, երբ դոքա մարդուս գիտակցութեան մէջ գոյութիւն չեն ունեցել. ուրեմն և «հոգի» մրապատկերը իր ծագումն սպացել է ժամանակի ընթացքում։ Այժմ խնդիր է, թէ որպէս կարող էր նախամարդու մէջ հոգելէնի մասին մի գաղափար կազմել և թէ ինչպէս նա կրօնական պաշտամունքի մէջ այնքան մեծ ուել պետի սպանարկութեան մէջ լինի մի իւթեղէնի իրի գաղափարը։ Սովորական և ամենօրեայ երե-

Վերել լիշեցինք, որ մեր մանկութեան և առհասարակ մարդկացին գիտակցութեան պատանեկութեան շրջանում անթրոպոպաթիան է բնորոշում մրածողութեան եղանակը. այդ ժամանակ գաղափարական արսուրակցիան և մերաֆիզիկական սոլեկուլացիան մեր գործը չեն ³։ Այսպէս և հոգելէնի գաղափարը միւնոյն է, ինչ որ մի գաղափարն մի նիւթեղէնի իրի գաղափարը։ Սովորական և ամենօրեայ երե-

¹ Ed. v. Hartmann—Das religiose Bewusstsein der Kulturmenschheit. (=Եդ. Փո՞ն Հարտման—Կուլտուրական մարդկութեան կրօնական գիտակցութիւնը), էջ 20.

² Fritz Schulze: Kosmos (=Ֆրից Շուլց.՝ Կոսմոս), III. բարերը. չափանիւթեան, IV. տեքոր, էջ 248.

³ Շուլցէ, նոյն ուել, էջ 250.

ւոյթները չէին կարող ԴՐԴՆ նախամարդուն, որը ամենից առաջ և միայն իր օրական ապրուստի մասին է հոգում, նա որ աւելի բարձր իշեալ չունի, քան իւր անմիջական գոյութեան պահպանումը և որն արդէն սպազ է մանկութիւնից ի վեր բնութեան շարունակ կրկնուղ երկայթներին հանդիսաբես լինելու՝ առանց դիմելու ըմբռնել կարողանալու, սոքա չէին առաջինը, որ շարժառիթ հանդիսացան նախամարդուն խորհրդածութիւններ անելու։ «Միայն մի պատճառար իւր կրկնութեամբը չէ վերաբերում հասարակին և անուշադրութեան փալու շրջանին. միայն մի բան դեռ այսօր ևս կիսակիրթ ժողովուրժների համար, իբր բնութեան արգասիք՝ իր հասարակ լինելու պատճառով անուշադրութեան թալու արժանի չէ, այլ բնութեան խանգարումն է նկատում և դորահամար մեծ ուշուրութեան արժանի և զարմանալին է — մերձաւորի մահը¹։ Երեկւայ կենդանի մերձաւորը, սիրելին, խնամակալը, պաշտպանը, որի հետ կենսական զանազան և անմիջական յարաբերութեան մէջ էր, այսօր դիմակացած ընկել է դեռին։ Տարօրինակ և զարմանալի երեսյթ, նախամարդու համար բոլորովին ոչ բնական. այժմ նոյն իսկ շաբ «վայրենիների» մօտ մահը ոգիների չարագործութեան արդիւնքն է, որոնք բռնի կերպով խլում են մարդու հոգին²։ Ֆիզիոլոգիայի օրէնքները գտնելու կամ այդպիսի օրէնքներ ըմբռնելու համար նախամարդու հասկացողութիւնը դեռ շաբ դնաս էր. նա չէր կարող հետաքրքրւել մահաւան ժամանակ երեւան եկած օրդանական-ֆիզիոլոգիական զանազան փոփոխութիւններով. նախամարդու գիտութիւնը կենդանական մարմնի

¹ J. Lippert — Der Seelencult in seinen Beziehungen zur althebraeischen Religion. (=Յ. Լիպերտ — Հոգեպաշտութիւնը իր չարաբերութիւնների մէջ դէպի հին երբագական կրօնը). Berl. 1880. էջ 3։

² Պրճ. Ալբեղեանից իմանում ենք թէ այդ կերպ մոռածելը հակերիս համար բոլորովին խորթ չէ. «Ալմեն լաւ բան—կեանք, օրւակ լուսը, բերդակութիւն, բալդաւորութիւն և ալլն... ըմբռնում է իբրև լուսաւոր (բարի) ոգիների գործ, և ամեն վար բանը—մահ, խաւար, հիւանդութիւններ, դժբաշտութիւն և ալլն, իբրև գիշերապին չար ոգիների գործ» (Արմ. Volks-glaube, էջ 7). Բայց երեսում է որ այդ կարծիքը իւրոք սրբազրւելէ, որովհերեւ նոյնուել. էջ 16 կարդում ենք. «Զարոգիները կարող են թէպէտ չարիք և հիւանդութիւններ՝ բայց ոչ մահ պատճառել մարդուն»։

զերաբերեալ, սորա արդաքին (և ներքին) զգայական մասերից այն կողմը չեր անցնում: Արդ, թնջպէս է բացագրում նա մահւան երեւոյթը, թնջ տարրերութիւն է գտնում երեկւաց կենդանիի և այսօրւաց մեռեալի մէջ: — Ըստ երեսոյթին, մեռեալի մարմինը իր մասերով ոչ մի փոփոխութիւն չէ կրել. միայն նա ընկած է գետին՝ անշարժ. առաջ այս մարմինը տաք էր, այժմ բոլորովին սառն. կենդանին շնչում էր և նորս արդաշնչութիւնը տաք էր ու արդադրում էր խոնաւ շոգի (որը ցուրփ ժամանակ գեսնւում է), կենդանի մարմնի գանազան բեղերում խփում է զարկերակը. մեռեալի մօդ անյայտանում են սոքա: Ահա արդբերութիւնը. ահա օրգեղ է կարծում նախամարդը մահւան՝ դիակի անշարժութեան պարճառը գտնել: Մահւամբ պակասել է մարդու մարմնից մի բան, որը պարճառ դարձաւ նորա անկենդանութեանը, որը ուրեմն նորա կենդանութեան կրողն էր — նրա հոգին: «Մահը, կարելի է ասել, աշխարհ բերաւ հոգիները... հոգին այսքեղ առաջին անդամը լինելով իրօք — զըստնըց¹: Այսգեղ առաջին անդամը հոգու մասին մկանքելու, մի մրապարկեր կազմելու շարժառիթը ներկայացաւ մարդուն. — հոգին է մարդու դաքութիւնը, նրա զարկերակը (այսինքն երակներում վագող դաք արիւնը) և որ գլխաւորն է՝ նորա շունչը: Մարդու շաքը՝ նախամարդու համար անհասկանալի լոյսի և սուերի երեւոյթը, որը այնքան նման է մարդուն, կազմում է միւսների հետ այն առարկաները, որոնցից հոգու սկզբնական մրապարկերները երեւակացել են:

Այս առաջին քայլն անելուց յետոյ այլ ևս հեշտ, կարելի է ասել նոյն իսկ, անհրաժեշտ էր առաջ գնալ: Մահով բաժանւում է մարդուց մի բան — նրա հոգին, մարմնին կենդանութիւն դրովը, այսինքն կենդանութեան զօրութիւնն իր մէջ կրողը և որ շարունակում է ապրել դեռ ևս: (Այսգեղ հարկաւոր է նկատել, որ հոգու այսպիսի մրապարկերը միւսնոյնը չէ անմահութեան գաղափարի հետ, որովհետեւ այս հոգին դեռ ոչնչանալու վիճակին ենթակայ է, ինչպէս յետոյ պիտի բեսնենք: Անմահութեան գաղափարը շատ աւելի ուշ ժամանակւաց ծնունդ է):

¹ Շուլցէ, նոյն բել էջ 251.

Թէ մահից յետոյ հոգին դեռ ևս ապրում է, ապացուցանում է նոյնպէս և Արագը: Թերես անհիմն լինի պնդել թէ՝ «միշտ երազի երկոյթներն են եղել, որոնք անմահութեան գաղափարը արթնացրել են»², այնուամենայնիւ չէ կարելի բարակուսել, որ երազը մի ուժեղ ֆակտոր էր հոգու գոյութեան և ապա անմահութեան գաղափարները կազմելու համար:

Մերձաւորը, սիրելին մեռաւ. բայց նորա հոգին շարունակում է ապրել, Սա իր ամբողջ կութեամբը մահացածի ներկայացուցիչն է. նշանակում է՝ նախամարդու անթրոպոպաթիք մոածողութեամբ, նա կենդանի մարդու բոլոր պահանջներն էլ ունի. նա կարիք ունի հոգածութեան և խնամքի, ու սոքա ֆակաւին ապրող մերձաւորների պարականութիւնն են: Այս յարաբերութիւնից ահա առաջանում է պաշտամունքը (պաշտել=ծառայել, խնամել, հաճոյակափար լինել): Աւրեմն ոչ թէ անյայր զօրութիւնների անորոշվախից, այլ սիրալիիր մեծարանքից առ ծանօթ ասուածները, որոնք արենակցական ուժեղ կապերով իրենց պաշտողների հետ կապած են, սկիզբն է առնում կրօնը՝ այս բառի միակ իսկական նշանակութեամբ: Կրօնը սարսափի ծնունդը չէ...: Պաշտամունքը դրական կրօնների ուղին ու ծուծն է, որն ուղղում է դէպի ծանօթասուածների հոգիները. և նոցա պաշտօն մափուցանելը—հոգեպաշտութիւնը (Seelenewelt) սկիզբն է առնում անմիջապէս կրօնի հետ և հոգին գտաղափարը ինչպէս զարդացած՝ կափարելագործւած համարւող կրօնների, նոյնպէս և ամենանախնական կրօնների մէջ երեւան է զալիս ու կրօնական պաշտաման առարկաների էութիւնն է կազմում: Բայց անսարակոյս նա չէ կրօնի ծագման միակ Փակուրը, որը խիստ բարդ հանգամանքների ծնունդ է, ոչ էլ կլօնների միակ սկզբնական բարըն է նա:

Հոգեպաշտութեան գանագան և բազմաթիւ մնացորդներ և արփաքին սովորութեան ձեեր գոյութիւն ունին այսօր ոչ միայն ըվայրենիների, այլ նաև քրիստոնէութեան մէջ. և դոցանից շագերը նոյն իսկ քրիստոնէական եկեղեցուց սրբագործւել են: Այսպէս օրինակ-

² Peschel - Voelkerkunde (=Պէ;էլ—Ազգագրութիւն) Լէպցիզ, 1875. էջ 271.

հայ քահանան աշօթում է «Հոգւցն հանգուցելոց, Քրիստոս Ասպիւ-
ւած, արա հանգիստ ողորմութիւն»։ Նա խնդրում է Քրիստոսից
հանգած հոգիներին հանգիստ շնորհել, որովհետեւ իրենց հանգիստը
չփրած հոգիները վնասում են մարդկանց, անմաքուր կախարդու-
թիւն անում, պղծում են (spuk treiben)։ Հայոց կրօնական երգե-
գերի մէջ հոգու պաշտամոնքը և փառաբանութիւնը ահազին փեղ
է բռնում։ Ս. Գրքերի ընդունած մարդկացին հոգին հաւասար է
Ասպուծոյ շունչին, որը երայեցերէնի մէջ միենոյն բառովն է ար-
դայայիւում, ինչ որ քամին (ruagħ). և այս պատահական նմա-
նութիւն չէ, այլ արդարեւ միենոյն մրապավկիրն է եղել երկու-
սի մասին։ (Ռսերէն Դուխ, Դուշ, արաբերէն նէֆս, նէֆէս, հայերէն
հոգի, ոգի, շոգի, շունչ և այլն. բառերի նոյնահանչիւն լինելը ամե-
նեին պատահական չէ)։

Մի ասացւածքում պատմւում է որ Գրիգոր Լուսաւորիչը Ցա-
րոնոյ վանքի քրմերի հետ կուելով՝ նոցա յաղթում և նոյնպեղ
իրենց բնակութիւնը հասրաբող ոգիներին հալածում է ու միայն
մէկին պահում է այնպեղ ծառայութեան համար. աւելացնում են,
որ այդ ոգին կաղ է և թոնիրի մոխիրն է դուրս կրում, որ ծա-
ռայութեան անունովն էլ կոչւում է վանքի մոխրաման։¹ Միենոյն
աւանդութիւնը պատմւում է նաև Վանայ սահանդում գրնւած
«Հոգւցն վանքի» մասին, այն տարբերութեամբ, որ այսքեղ Գրիգոր-
Լուսաւորչին փոխարինում է Թադէոս Առաքեալը (որն իբր թէ հիմ-
նել է այդ վանքը)։ ոգին նոյնպէս կաղ է և նոյն անունն ունի ։²
Այս վանքի անունը մեզ իրաւունք է տալիս եզրակացնել, որ այդ
տեղը սկզբում հոգեպաշտական արարողութիւնների մի կեդրոն
պէտք է եղած լինի։

¹ Հմմոր. Աբեղեան—Նոյնուել. էջ 113.։

² Այդ մասին հետաքրքրւելով՝ վերովիշեալ երկու վանքերում ես
հարցրի. պատասխանեցին թէ՝ արդարեւ իրենք դուրս են թափում մոխիրը,
բայց ոչ այնքան լաճախ և այնքան շատ, ինչպէս ուրիշ դեղեր, որովհետեւ
«Կաղ-մոխրահանը» իր պարզաւորութիւնը կատարում է, թէպէտ իր կա-
շութեան համար չէ կարող լրիւ կատարել արդ։

Այդ վանքերի թոնիրներում համեմատաբար քաշաքացիների թոնիր-
ների հետ, քիչ է մոխիր գուանումն դորա պատճառը վառելիքների տար-
բերութիւնն է։

Արնեղքայո դառնալու սովորութիւնը հոգեպաշտական այն հին մնացորդներիցն է, երբ մարդուս հոգին պազկերացնուում էր իրեւ նորա արիւնը Արեան իրար հետ խառնելով երկու օպարներ դառնում են հարազար արիւնակիցներ. քրիստոնեաց հոգեորական-ների ազդեցութեան դակ արիւնն իսկապէս իրար հետ խառնելը թողնում են հայերը, բայց սովորութիւնը փոքր դարբեր ձևով մինչև այժմ շատ տեղ պահել են, արնեղքայր դառնալ ուղղողները գնում են եկեղեցի ու միասին խաչն ու աւետարանը համբուրելուց և քահանայի օրհնութիւնն սրանալուց յետոյ դառնում են իսկական հարազարներ, որոնց մօտ խնամութիւնը արգելւած է:

Երուսաղէմ՝ Քրիստոսի զերեզմանն ուխտի զնացողները վիրել (taetovieren) են դալիս իրենց մարմնի որոշ մասերը և դառնում են Շմահիկեսին, այսինքն իսկապէս Քրիստոսի արիւնակից և լրացրներ, որը բացարձակապէս հոգեպաշտական հայեցքների ծնունդ է և շատ աւելի հին՝ քան ինքը Քրիստոս։ Այս սովորութիւնը կաց մահմեդականների մէջն էլ, որոնք փոխանակ երուսաղէմ զնալու Մեկա (Հաջ) են գնում, (Եիանները նոյնույշ և Քէրբէլէ և Մէշէդ), և մահիկեսի չեն կոչում, այլ Շաջին (կամ քէրբէլայի, մէշէդի): Կրօնական նոր վարդապետութիւնները կարող չեն միանդամից արմադախիլ անել ժողովրդի մէջ ամրացած հայեցքները, որոնք ժամանակի լնթացքում միայն փոխադարձ ազդեցութեան դակ յարմարուում են միմեանց:

(Հարունակելի)